

Երթուղի 1.1

Գառնու այցելուների կենտրոն – Հավուց թառ վանական համալիր – Գառնու այցելուների կենտրոն.

Երկարությունը՝ 5,2 կմ

Տևողությունը՝ 2 ժամ

Բարդության աստիճանը՝ հեշտ

Արահետը սկսվում է Գառնու այցելուների կենտրոնից և տանում է դեպի միջնադարյան Հայաստանի նշանավոր կրոնական և մշակութային կենտրոն Հավուց թառ վանական համալիր (X-XIII դդ.): Համալիրը Ազատ գետի հովտի բարձունքներից մեկի վրա է՝ կիսավեր, սակայն շատ գեղեցիկ հուշարձան է՝ անկրկնելի համայնապատկերով: Կրթական կենտրոն լինելուց բացի, այն եղել է նաև խոշոր գրչության կենտրոն: Դեպի վանք տանող արահետի ողջ երկայնքով հանդիպում են վառ կանաչ գունավորմամբ մողեսներ: Քարքարոտ սարավանջերին հանդիպում է քարակաքավ: Այս վայրերում սովորական են գիշատիչ թռչունների մի շարք տեսակներ: Արահետն ավարտվում է այցելուների կենտրոն վերադարձով:

Երթուղի 1.2

Գառնի գյուղ - Հավուց թառ վանական համալիր - Գառնու այցելուների կենտրոն - Հին կամուրջ – Քարերի սիմֆոնիա

Երկարությունը՝ 11.1 կմ

Տևողությունը՝ 4 ժամ

Բարդության աստիճանը՝ միջին

Երթուղին սկսվում է Գառնի գյուղից, սալապատված ճանապարհն իջնում է դեպի Ազատ գետի կիրճ, որի երկայնքով անցնում է Քարերի սիմֆոնիա զարմանահրաշ բնության հուշարձանը: Այն առաջացել է երկրաբանական բարդ գործընթացների արդյունքում և աշխարհի հազվագյուտ նմանօրինակ վայրերից մեկն է: Արահետը թեք է և քարքարոտ, ուստի անհրաժեշտ է ուշադիր անցնել: Այստեղ՝ գետի վրա, կառուցված է Գառնու Հին կամուրջը: Այն 11-րդ դարի կառույց է, գետի աջ ցածր ափը միացնում է ձախ բարձր ափին, և այս ճանապարհը դեռևս միջին դարերից Գառնի գյուղը կապել է Հավուց թառ վանական համալիրին: Այստեղից ճանապարհը շարունակվում է դեպի «Խոսրովի անտառ» պետական արգելոցի Գառնու այցելուների կենտրոն, այնուհետև հասնում է միջնադարյան Հայաստանի կրոնական և մշակութային կենտրոն՝ Հավուց թառ վանական համալիր: Համալիրը Ազատ գետի հովտի բարձունքներից մեկի վրա է՝ կիսավեր, սակայն գեղեցիկ հուշարձան է՝ անկրկնելի համայնապատկերով: Վերադարձին ճանապարհը կրկին անցնում է Գառնու այցելուների կենտրոնի մոտով, և երթուղին ավարտվում է Գառնու հեթանոսական տաճար այցով: Այս քայլարշավը հիանալի հնարավորություն է

տալիս տեսնելու թե՛ հեթանոսական և միջնադարյան պատմամշակութային հուշարձաններ, և թե՛ բնության յուրօրինակ հուշարձան ու բնական լանդշաֆտների հիասքանչ բազմազանություն:

Երթուղի 1.3

Վեդու այցելուների կենտրոն – Սպիտակ տուն – Վեդու այցելուների կենտրոն:

Երկարությունը՝ 11.3 կմ

Տևողությունը՝ 4 ժամ

Բարդության աստիճանը՝ հեշտ

Երթուղին սկսվում է Վեդու այցելուների կենտրոնից՝ ծովի մակարդակից 1300 մ բարձրության վրա և անցնում է բավականին յուրօրինակ երկրաբանական տարածքով: Երթուղու առաջին կանգառը Սպիտակ տունն է: Այն նախկինում օգտագործվել է գիտնականների կողմից ուսումնասիրությունների նպատակով: Այստեղից ճանապարհը բարձրանալով վեր սկսում է իջնել և հասնում է երթուղու վերջնակետ՝ երկաթե կամուրջ, որից 10 մ դեպի հյուսիս կա գեղեցիկ փոքրիկ մի ջրվեժ և հանգստի տաղավար: Այս տարածքում որոշակի ժամերի ժայռերի լանջերին հնարավոր է տեսնել բեզուարյան այծերի: Սա Հայաստանի միակ վայրն է, որտեղ գիհու ծառերի վրա բնադրում է ՀՀ Կարմիր գրքում գրանցված սև անգղը: Երթուղին աչքի է ընկնում գեղեցիկ բնապատկերներով, անտառներով և Խոսարով գետի գեղատեսիլ կիրճով:

** Ուղեկցորդի առկայությունը պարտադիր է:*

Երթուղի 2.1

Գառնու այցելուների կենտրոն – Գեղմահովիտ գյուղատեղի – Վահագնի ջրվեժ – Աստղիկի ջրվեժ – Գառնու այցելուների կենտրոն

Երկարությունը՝ 21 կմ

Տևողությունը՝ 6 ժամ

Բարդության աստիճանը՝ միջին

Երթուղին սկսվում է Գառնու այցելուների կենտրոնից և հասնում է Գեղմահովիտ գյուղատեղիի ավերակներ: Գյուղատեղիի կենտրոնական մասում գտնվում է միանավ բազիլիկ հորինվածքով եկեղեցի: Այս գյուղատեղին և եկեղեցին համարվում են վաղ միջնադարյան ճարտարապետության լավագույն նմուշներից: Երթուղու հաջորդ կանգառը Վահագնի և Աստղիկի ջրվեժներն են: Այս երկու ջրվեժները միմյանց հետ կապված են իրենց դիցաբանական անուններով: Հին հեթանոսական

Ժամանակաշրջանում Աստղիկը համարվել է գեղեցկության և պտղաբերության աստվածուհին, Վահագն Վիշապաքաղի՝ կրակի և պատերազմի աստծու սիրեցյալը կամ կինը: Ջրվեժներով երթուղին ավարտցում է Գառնու այցելուների կենտրոն վերադարձով:
** Ուղեկցորդի առկայությունը պարտադիր է:*

Երթուղի 2.2

Գառնու այցելուների կենտրոն – Հավուց թառ վանական համալիր – Աղջոց Սբ. Ստեփանոս վանական համալիր - Գլան գյուղատեղի – Վահագնի ջրվեժ – Աստղիկի ջրվեժ– Փոքր Շեն գյուղատեղի – Գեղմահովիտ գյուղատեղի - Գառնու այցելուների կենտրոն

Երկարությունը՝ 27.1 կմ

Տևողությունը՝ 8 ժամ

Բարդության աստիճանը՝ դժվար

Երթուղու առաջին կանգառը Հավուց թառ վանական համալիրն է, որտեղից արահետը լանջով անցնում է փշոտ թփերի միջով և դուրս գալիս հարթ տարածք: Այնուհետև ճանապարհը ձգվում է մինչև Ելիջա գյուղատեղիի ավերակները: Գյուղատեղիից դեպի հարավ-արևելք երևում է Աղջոց Սբ. Ստեփանոս վանական համալիրը: Այստեղից երթուղին իջնում է Գլան գետի կիրճ և թեք լեռնալանջով բարձրանում դեպի Գլան գյուղատեղի, որտեղից էլ սկսվում է Վահագնի և Աստղիկի ջրվեժներ տանող արահետը: Այս երկու ջրվեժները միմյանց հետ կապված են իրենց դիցաբանական անուններով: Հեթանոսական ժամանակաշրջանում Աստղիկը համարվել է սիրո և պտղաբերության աստվածուհին, Վահագն Վիշապաքաղի՝ կրակի և պատերազմի աստծու սիրեցյալը կամ կինը: Աստղիկի ջրվեժից հետո երթուղին շարունակվում է դեպի Փոքր Շեն, ապա վերադարձ Գեղմահովիտ գյուղատեղիի ավերակներ: Երթուղին ավարտվում է Գառնու այցելուների կենտրոնում

** Ուղեկցորդի առկայությունը պարտադիր է:*

Երթուղի 2.3

Գառնու այցելուների կենտրոն – Փոքր Շեն գյուղատեղի – Ներքին Վանստան գյուղատեղի – Բերդատակ գյուղատեղի - Երջանկահովիտ - Ժայռափոր եկեղեցի – Գեղմահովիտ գյուղատեղի - Գառնու այցելուների կենտրոն

Երկարությունը՝ 31.3 կմ

Տևողությունը՝ 9 ժամ

Բարդության աստիճանը՝ շատ դժվար

Ուղևորությունը սկսվում է Գառնու այցելուների կենտրոնից դեպի Փոքր Շեն գյուղատեղի: Գյուղատեղիի արևելյան ծայրամասում գտնվում է 4-5-րդ դարերի կիսավեր պահպանված եկեղեցին: Այստեղից ճանապարհը թեք լանջով հասնում է Վանստան գյուղատեղի, որտեղից բացվում է տեսարան դեպի Ազատ գետի հովիտ: Վանստան գյուղատեղիի և եկեղեցական համալիրի շինությունների մեծ մասը գտնվում են փլատակների տակ: Երթուղին անցնում է բազմաթիվ պատմաճարտարապետական հուշարձանների տարածքով և աչքի է ընկնում բարդությամբ ու գեղեցիկ բնապատկերներով: Այս տարածքում հանդիպում են սպիտակագլուխ անգղի բնադրման վայրեր: Խոշոր կաթնասուններից հանդիպում են գայլ, գորշ արջ, մացառախոզ, բեզուարյան այծ և այլն: Երթուղին բավական երկար է ու ավելի հաճելի է, երբ համադրվում է ձիարշավի կամ ամենագնաց մեքենայով ուղևորության հետ:

** Ուղեկցորդի առկայությունը պարտադիր է:*

Երթուղի 2.4

Գառնու այցելուների կենտրոն - Բերդատակ գյուղատեղի – Կաքավաբերդ – Վերին Վանստան գյուղատեղի - Ներքին Վանստան գյուղատեղի - Փոքր Շեն գյուղատեղի – Գեղմահովիտ գյուղատեղի - Գառնու այցելուների կենտրոն

Երկարությունը՝ 33.56 կմ

Տևողությունը՝ 10 ժամ

Բարդության աստիճանը՝ շատ դժվար

Ուղևորությունը սկսվում է ամենագնացով կամ ձիով՝ Գառնու այցելուների կենտրոնից: Բերդատակ լքված բնակատեղիի ավերակներից սկսվում է քայլարշավը: Հին բնակատեղին գտնվում է Կաքավաձորում՝ այն բնական գեղեցկատես ժայռակերտի տակ, որի վրա նշանավոր Կաքավաբերդն է: Այստեղից էլ ծագել է Բերդատակ անունը: Զառիթափ լանջով արահետը բարձրանում է դեպի Կաքավաբերդ, որը պատմական Հայաստանի ամրոցաշինության լավագույն նմուշներից է: Ամրոցի հարթակից դիտվում է ամրոցը տարածաշրջանը: Կաքավաբերդի ձորը հարուստ է կենդանական աշխարհով: Այս վայրերում օրվա որոշ ժամերին կարելի է դիտել բեզուարյան այծերի: Կաքավաբերդից

հետո արահետը թեքվում է դեպի Կոթուր գետը, հատում այն ու ձգվում դեպի մերձալպյան գոտի, որտեղ նույնպես կան հին բնակավայրերի ավերակներ և անհիշելի ժամանակներում բնակության համար ծառայած քարայրեր: Արահետն այստեղից իջնում է դեպի Վերին Վանստան, ապա Ներքին Վանստան և Փոքր Շեն գյուղատեղիների ավերակներ, որոնցում հանդիպող հին շինությունների ու բնակավայրերի հետքերը, խաչքարերն ու այլ մշակութային կոթողների մի մասը մեզ են հասել վաղ քրիստոնեության ժամանակներից և անգնահատելի պատմամշակութային արժեք են ներկայացնում: Երթուղու ողջ տարածում հնարավոր է հանդիպել սողունների, թռչունների և կաթնասունների բազմաթիվ տեսակների: Քայլարշավն ավարտվում է Գեղմահովիտ գյուղատեղիի ավերակների մոտ, որտեղից ուղևորությունը հնարավոր է շարունակել ամենագնաց մեքենայով կամ ձիով՝ մինչև Գառնու այցելուների կենտրոն:

** Ուղեկցորդի առկայությունը պարտադիր է:*

Երթուղի 2.5

Վեղի և Խոսրով գետերի միախառնման վայր – Տափի բերդ – Վեղու այցելուների կենտրոն – Սպիտակ տուն – Խոսրով գյուղատեղի – Օդերևութաբանական կենտրոն – Կաղնու անտառ – Թռչնաբերդ – Վեղու այցելուների կենտրոն

Երկարությունը՝ 30 կմ

Տևողությունը՝ 5 ժամ

Բարդության աստիճանը՝ միջին

Ուղևորությունը սկսվում է ամենագնացով կամ ձիով, շարժվելով դեպի Տափի բերդ (10-րդ դար), որը փոքր, ամուր պարիսպներով, ներսում եկեղեցիով ամրոց է: Այստեղից վերադառնալով ճանապարհը շարունակվում է դեպի Վեղու այցելուների կենտրոն, որտեղից սկսվում է քայլարշավը: Երթուղու հաջորդ կանգառը Սպիտակ տունն է: Այն նախկինում օգտագործվել է գիտնականների կողմից ուսումնասիրությունների նպատակով: Սպիտակ տան մոտից ճանապարհը բարձրանալով վեր սկսում է իջնել և հասնում երկաթե կամրջի մոտ, որտեղից այն շարունակվում է դեպի Խոսրով գյուղատեղիի ավերակներ: Ճանապարհի ողջ երկայնքով աջ կողմից հոսում է Խոսրով գետը՝ լի գեղեցիկ բնապատկերներով և բնական հուշարձաններով, ինչպիսիք են կաղնու անտառը, քարածածկ լեռնալանջերը, Թռչնաբերդ կոչվող բարձր ժայռը: Այստեղ որոշակի ժամերի ժայռերի լանջերին հնարավոր է տեսնել բեզոարյան այծեր: Բարձրանալիս հնարավոր է նաև հետնել մոտակայքում բնադրող սև անգղի թռիչքին: Քայլարշավի մեծ մասն անցնում է խորն անտառի միջով, ուստի այստեղ խրախուսվում է լռությունը՝ վայրի բնության ներդաշնակությունը պահպանելու համար: Քայլարշավն ավարտվում է Սպիտակ տան մոտ, որտեղից էլ ամենագնաց մեքենայով կամ ձիով՝ մինչև Վեղու այցելուների կենտրոն:

** Ուղեկցորդի առկայությունը պարտադիր է:*

Երթուղի 2.6

Վեդի և Խոսրով գետերի միախառնման կետ - "Խաչաձոր" տեղամասի ուղեփակոց - Ջղինի լճեր - Մանկունք գյուղատեղ - Սպիտակ վանք - "Խաչաձոր" տեղամասի ուղեփակոց

Երկարությունը` 22.7 կմ

Տևողությունը` 8 ժամ

Բարդության աստիճանը` դժվար

Երթուղին սկսվում է Խաչաձորի և Խոսրովի տեղամասեր տանող խաչմերուկից` ուղղվում դեպի Խաչաձորի տեղամաս: Խաչաձորի երթուղին ձգվում է Մանկուկ գետի գեղեցիկ կիրճով դեպի արգելոցի արևելյան հատվածները: Այստեղ գտնվում են պատմական նշանակություն ունեցող հին գյուղատեղիներ, եկեղեցիներ, գեղաքանդակ խաչքարեր և արձանագիր տապանաքարեր: Երթուղին տանում է Մանկուկ գետի կիրճով դեպի Ջղինի լճակներ: Այստեղից այն բարձրանում է Մամիկոնյան իշխանների դամբարան, այնուհետև` Մանկունք գյուղատեղի: Մանկունքի դիմաց գտնվում են Սակոաբերդ ամրոցի ավերակները և Սակոաբերդ գյուղատեղին: Երթուղու վերջնակետը Սպիտակ վանքն է: Այստեղ պահպանվել են միայն կիսավեր շինություններ:


Խաչաձորը չափազանց հարուստ է բուսական և կենդանական աշխարհի բազմաթիվ տեսակներով` բեզոարյան այծ, գորշ արջ, վայրի խոզ, սողունների մի շարք տեսակներ: Այստեղ աճում են վայրի տենձենին, նշենին, փշատենին, մասրենին: Արգելոցի այս տեղամասում հանդիպում է ընձառյուծը, որի միգրացիոն ուղիները անցնում են բարձր լեռնագագաթներով:

** Ուղեկցորդի առկայությունը պարտադիր է:*

Խոսրովի Անտառ Պետական Արգելոց

Էկո-արչարչական արահետներ և ենթակառուցվածքներ
Մասշտաբ՝ 1:100 000

Պատմական Հուշարձաններ, Բնակատեղիներ և Բնության
Գեղատեսիլ Վայրեր



- Այցելուների կենտրոն
- Ուղեփակոց
- Տեղամասի գրասենյակ
- Հանգստի տաղավար
- Դիտակետ
- Աղբյուր
- Ջրվեժ
- Քարանձավ
- Բնակատեղի
- Վանք
- Ամրոց
- Վիշապաքար
- Կամուրջ
- Արգելոցի սահմաններ
- Տեղամասի սահմաններ

- Երթուղիներ**
Քայլարչարչական.
- 1.1
 - 1.2
 - 1.3
- Համակցված.
(Քայլարչարչակ և Ամենագնացով կամ Ձիով Արչարչակ)
- 2.1
 - 2.2
 - 2.3
 - 2.4
 - 2.5
 - 2.6
- Վեղի

- Բնության Գեղատեսիլ Վայրեր**
1. Վահագնի ջրվեժ
 2. Աստղիկի ջրվեժ
 3. Երջանկահովիտ
- Ամրոցներ**
4. Կաքավաբերդ
 5. Տափի (Գևորգ Մարգարեոսի)

- Վանքեր**
6. Հավուց Թառ
 7. Աղջոց
 8. Մանկունք
 9. Սպիտակ
- Հին Բնակատեղիներ, Ավերակներ**
10. Վերին Վանստան
 11. Ներքին Վանստան
 12. Փոքր Շեն (Ավանիկ)
 13. Ուրծ
 14. Բերդատակ
 15. Գեղմահովիտ
 16. Գլան
 17. Խոսրով